ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

24.12.2024թ.

Վայոց Ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Մալիշկա բնակավայր

2024 թվականի դեկտեմբերի 24-ին ժամը 15:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. հանրության իրազեկման և հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին № 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի (առաջին լսում) ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (ՎՁՄ, Եղեգնաձոր համայնք, գ. Մալիշկա, 1 փողոց շենք 1) կայացավ «ԳԵԼԻՈ» ՍՊԸ-ի (գրանցված՝ ՀՀ, ք. Երևան, Բագրատունյաց փ. շ. 17, բն. 11 հասցեում) կողմից ներկայացված ՀՀ, ՎՁՄ, Եղեգնաձոր խոշորացված համայնքի Մալիշկա բնակավայրի տարածքում գտնվող բազալտների երևակման 8.22 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0274-0073) «Մոզ» կոչվող տարածքում երկրաբանահետազոտական աշխատանքներ կատարելու, բազալտների որակական և քանակական գնահատական տալու, հետագայում արդյունահանման նպատակով հանրային քննարկում: Քննարկման պատասխանատուն հանդիսանում է ՀՀ, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանը, ի դեմս Մալիշկա բնակավայրի վարչական ղեկավարի, իսկ նախաձեռնող կազմակերպությունը «ԳԵՈԷԿՈՆՈՄԻԿԱ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Արամ Բաղդասարյանը, «ԳԵՈԷԿՈՆՈՄԻԿԱ» ՓԲԸ գլխավոր երկրաբան Մանվել Հարությունյանը, «ԳԵԼԻՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Աշոտ Սահակյանը, Մալիշկա բնակավայրի վարչական ղեկավար Գարիկ Նազարյանը (նիստը վարող) և Սամվել Այվազյանը Եղեգնաձորի համայնքապետարանի գլխավոր մասնագետ (արձանագրող) և Մալիշկա բնակավայրի մի խումբ բնակիչներ: Ելույթ ունեցավ նիստը վարող Գ. Նազարյանը ներկայացնելով «ԳԵԼԻՈ» ՍՊԸ-ի կողմից Եղեգնաձոր համայնքի ղեկավարին հանրային լսում կազմակերպելու վերաբերյալ և ներկայացրեց օրակարգում քննարկվելիք հարցը, ձայնը տալով ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Արամ Բաղդասարյանին, ով ներկայացրեց, որ ընկերությունը ցանկանում է ընդերքի օգտագործելու իրավունք ունենալու նպատակով կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ որոշելու ապառների պիտանելիությունը որպես երեսպատման հումք շինարարական աշխատանքների համար, իսկ բլոկների արդյունահանման

չբավարարող ջարդաքարը՝ որպես հումք խճի և ավազի ստացման համար: Նշեց նաև, որ համայնքի համաձայնությունը ստանալոց հետո ընկերությունը կկազմի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագիր, աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, թափոնների կառավարման պլան և օրենքով նախատեսված կարգով կներկայացնի համապատասխան լիազոր մարմիններին:

Ելույթ ունեցան Մալիշկա բնակավայրի բնակիչներ՝

Արտաշես Կոստանյանը նշեց «Մոզ»-ի պատմամշակութային արժեք լինելը և խմելու ջրի վրա անդառնալի բացասական հետևանքների մասին և կտրականապես դեմ արտահայտվեց:

Հարություն Հարությունյանը նշեց, որ անիմաստ է այս քննարկումը շարունակել որովհետև Մոզը ունի պատմական և բնապահպանական մեծ արժեք և կտրականապես մերժեց ընդհանրապես քննարկումը այս թեմայով:

Սամվել Իսրայելյանը նշեց որ այս տարածքը ունի պատմամշակութային արժեք և մեծ վտանգ կա խմելու ջրերի անհետացման հարցում, քանի որ կանխատեսվում են պայթեցման աշխատանքներ և նշեց տարածաշրջանում կան այլ տարածքներ որոնք ձեր հետաքրքրությունները կբավարարեն, նույնպես հայտնեց իր անհամաձայնությունը: Ելույթից հետո «ԳԵՈԷԿՈՆՈՄԻԿԱ» ՓԲԸ գլխավոր երկրաբան Մանվել Հարությունյանը պարզաբանեց, որ բացառվում է որակապայթեցման աշխատանքներ:

Գոհար Բաղդասարյանը նշեց, որ հանքի բացման դեպքում այն մեծ վնաս կարող է հասցնել հարակից խաղողի այգիներին, նշելով որ մեր տարածաշրջանում ամենաքաղցրահամ «Արենի» սորտի խաղողը այնտեղ է աճում: Նշեց նաև, որ «Մոզ» տարածքը հայտնի է նաև օձերի ամենաբազմազան տեսակներով, կխաթարվի նաև նրանց էկոհամակարգը և դեմ արտահայտվեց:

Արա Հարությունյանը, ով «Մոզ» տարածքին սահմանակից ունի հողատարածք, որտեղ 90-ական թվականներին հանգստի գոտի է նախատեսել կառուցել և տեխնիկա է տարել, սակայն հնությունների կոմիտեյից եկել են և փաստել, որ 14-րդ դարի դամբարանի քանդելու պահ է ստեղծել և 200000 դրամի չափով տուգանել են: Այս տարածքը գյուղի պարծանքն է և խորհուրդ տվեց ստեղծել տուրիստական վայր:

Նիստը ավարտելուց հետո բնակիչները միաձայն որոշեցին իրենց անհամաձայնությունը տալ հետախուզման և արդյունահանման աշխատանքներ իրականացնելու համար և սկսվեց ստորագրահավաքը անհամաձայնության վերաբերյալ:

Կից ներկայացնում ենք՝

1. Տեսաձայնագրություն
2. Մասնակիցների ցուցակ
3. 8,22 հա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական
4. Բնակիչների անհամաձայնություն հայտնելու արձանագրություն

Նիստը վարող՝ Գարիկ Նազարյան

Արձանագրող՝ Սամվել Այվազյան

«ԳԵԼԻՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Աշոտ Սահակյան

24.12.2024թ.

Մասնակիցների ցուցակ

1. Արամ Բաղդասարյան „[illegible]" ՍՊԸ
2. [illegible] [illegible] [illegible]
3. [illegible] [illegible] Մհեր
4. Սարգսյան ՅՕԿ [illegible]
5. Բաղդասարյան [illegible] [illegible]
6. Վարդան [illegible]
7. Սամվել [illegible]
8. [illegible] [illegible]
9. Արամ [illegible]
10. [illegible] Սարգսյան
11. [illegible] Բաղդասարյան
12. Սարգսյան [illegible]
13. Մկրտչյան [illegible]
14. Սարգսյան [illegible]
15. [illegible] [illegible]
16. [illegible] [illegible]
17.
18. [illegible] Արամ
19. [illegible] [illegible]
20. Սարգսյան Սամվել
21. [illegible] [illegible]
22. [illegible] [illegible]
23.
24. Սամվել [illegible]

25. Կոմանդիրյան Արթուր

26. Այվազյան Սամվել

27. Սարգսյան Ռուբեն Ղազարի

28. Սահակյան Թովմաս Թովմասի

29. Սարգսյան Արթուր Ս.

30. Ղազանչյան Դավիթ Դավիթի

31. Միքայել Հայրապետյան

32. Գևորգ Բաբաջանյան

33. Գաբրիելյան Հովիկ

34. Գալստյան Խաչիկ

35. Գալստյան Խաչերես

Սամվել Այվազյան